ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԱԼԵՔՍԻԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Սրտագինս ողջունում ենք Ձեզ, օրհնված և նշանակալից օրվա՝ Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ:

Եղբայրաբար շնորհավորելով Ձեզ, Մենք մտովի հիշում ենք Ձեր բազմատեսակ գործունեությունը՝ հոգուտ սուրբ եկեղեցու:

Ահա քանի տարիներ է, որ Դուք Աստուծո ողորմությամբ առաջնորդում եք Ձեզ վստահված Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին՝ ավետարանական ավանդների ոգով, և այդ ողջ ժամանակվա ընթացքում Ձեր գործունեությունը ուղղում եք համաքրիստոնեական միասնություն ստեղծելու և երկրի վրա խաղաղություն հաստատելու գործին:

Ձերդ Սրբության գահակալության շրջանին Մեր երկու սուրբ եկեղեցիների բարի, եղբայրական ու վաղնջական հարաբերությունները ամրացան, բազմապատկվեցին և, հույսով ենք, որ ապագայում ևս նրանք պետք է ընդարձակվեն բարեկամության ոգով ու եղբայրական սիրով՝ հանուն Աստուծո փառքի և մեր հավատացյալ ժողովուրդների երջանկության:

Վերհիշելով Մեր անձնական հանդիպումները և զրույցները Ձերդ Սրբության հետ, որոնք Մեզ համար ուրախության աղբյուր են, վկայություն և հուսալիություն՝ ապագայում մեր եկեղեցիների միջև բարեկամության և համագործակցության:

Այսօր, Ձերդ Սրբության 60-ամյակի օրը, Մենք խորը սրտով առ Աստված ենք բարձրացնում Մեր ջերմագին աղոթքները, որպեսզի Ձեզ պարգևի քաջառողջություն, ամրացնի Ձեր ուժերը, ուղարկի երկնային օգնությունը և օրհնի Ձերդ Սրբության հառաջիկա գործունեությունը՝ ի փառս Աստուծո և սուրբ եկեղեցու:

Եղբայր ի Քրիստոս, ողջագուրանքներով ընդունեցեք մեր եղբայրական սերը:

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

Հ. Գ.—Ցավում ենք, որ ս. Սերգեյի տոնակատարությունների պատճառով Մենք զրկված ենք անձնապես ներկա գտնվելու և շնորհավորելու Ձերդ Սրբությանը: Սակայն Մեր կողմից որոշված պատգամավորությունը, գլխավորությամբ Տալլինի և Էստոնիայի գերաշնորհ միտրոպոլիտ Ալեքսիի, Մեզ պիտի փոխարինի Ձեր հանդիսություններին:

3 հոկտեմբերի 1969 թ.,
Ք. Մոսկվա